



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**

**ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ
2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար Ն. Ոսկանյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 08.02.2013 թիվ 3-Ն որոշմամբ

Գորիս

2013թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ	3
2. ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	3
3. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ	4
4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	7
5. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ	26
6. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՄԼԱԿԱՆԸ ԵՒ ՆՊԱՏԱԿԸ	26
7. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	28

Հավելված՝ քառամյա զարգացման ծրագրի աղյուսակային տարբերակ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը ձևավորվում է համայնքի ղեկավարի նախընտրական ծրագրային դրույթների, համայնքի հնարավորությունների ու ներուժի գնահատման, կառավարության, միջազգային եւ տարածաշրջանային կազմակերպություններից սպասվելիք ծրագրերից, տեղական հարկերից եւ տուրքերից գոյացող գումարների նախնական բաշխումների, համայնքի բնակիչների նվիրատվություններից նախատեսվող օգնությունների նպատակային օգտագործման հիման վրա:

Սույն քառամյա ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալտնտեսական իրավիճակի համալիր վերլուծության եւ առկա մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը եւ նպատակային բյուջետավարման գործընթացի հստակ իրականացումը:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 Պատմական համառոտ ակնարկ

Գորիս քաղաքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում: Գորիս համայնքը մշտական բնակավայր է եղել վաղ ժամանակներից: Գորիսի տարածքում հայտնաբերված մեծ ու փոքր քարանձավները վկայում են, որ բնակավայրն ունի հազարամյակների պատմություն, քանի որ նշված քարանձավները խոր հնադարում հանդիսացել են մարդկանց մշտական բնակության վայր: Ուշ միջնադարում Սյունյաց աշխարհի Հաբանդ գավառի Գորիս կենտրոնը Նախիջեւանից Զանգեզուրով դեպի Արցախ եւ Մերձկասպյան տափաստանները գնացող «Մեծ Աղի» կոչված ճանապարհի հանգույցն էր եւ հանդիսանում էր մելիքանիստ:

Ցարական Ռուսաստանի գերիշխանության ներքո՝ 1870թ.-ին, Գորիսն ստանում է Ելիզավետպոլ նահանգի Զանգեզուր գավառակենտրոնի կարգավիճակ: Քաղաքի հիմնադիրներն են՝ գավառապետ Ստարացկին եւ Մանուչար բեկ Մելիք-Հյուսեինյանները:

20-րդ դարասկզբին Գորիսն իր տնտեսական ու վարչական ենթակառուցվածքների զարգացվածության աստիճանով համարվել է Արեւելյան Հայաստանի 4-րդ քաղաքը: 1920-1930թթ. ընթացքում Գորիսը եղել է հայկական ՍՍՀ Զանգեզուր գավառի, ապա՝ Գորիսի շրջանի վարչական կենտրոնը: 1930-1970թթ. ժամանակահատվածում Գորիսն հանդիսացել է շրջանային, այնուհետեւ հանրապետական ենթակայության քաղաք:

Անկախության տարիներին, 1996թ.-ից ի վեր, Գորիսը վարչականորեն համարվում է Սյունիքի մարզի վարչական տարածքում տեղակայված քաղաքային համայնք:

2.2 Ավանդույթներ

Գորիսը հարուստ ավանդույթներ ունեցող քաղաք է, որի մասին են վկայում պահպանված հարուստ մշակութային ժառանգությունը: Բնակավայրի ակտիվ մշակութային կյանքի մասին է վկայում <Հին Գորիս> բնակավայրի ժայռափոր թատրոնը, որի կառուցումը վերագրվում է միջնադարին: Բնակավայրի պատմական լինելու մասին են վկայում Գորիսի հարավարևելյան հատվածում առկա հարուստ ժայռափոր կացարաններն ու <Հին Գորիս> բնակատեղիում գտնվող սուրբ Աստվածածին եկեղեցին, որի շրջակայքի պեղումներից ակնհայտ դարձավ, որ եկեղեցու

տարածքում առկա են նույնիսկ հեթանոսական ժամանակաշրջանի հետքեր: Ըստ միջնադարյան պատմիչների՝ եկեղեցու ներկայիս տարածքում եկեղեցիներ են կառուցվել IV դ. սկսած: Արդի եկեղեցական կառույցը շինվել է 1771թ. Մելիք Օհանի հիշատակին:

19-րդ դարի վերջին 3 տասնամյակներում սկսվեց ներկայիս Գորիս քաղաքի հիմնադրումը: Գորիսի ներկայիս ճարտարապետական գրավիչ տեսքը ժառանգությունն է նշված ժամանակահատվածի ճարտարապետական մտքի: Քաղաքի վարչական տարածքում պետության կողմից գրանցված պատմամշակութային հուշարձանների թիվն անցնում է 200-ից:

Գորիսը հարուստ է ոչ նյութական պատմամշակութային ժառանգությամբ: Քաղաքը, տեղակայված մետաքսի ճանապարհին, անմասն չի մնացել արհեստների յուրացման և զարգացման գործընթացներից: Գորիսում շատ էին արծաթագործները, ոսկերիչները, քարտաշները, դարբիններն ու այլ արհեստավորներ, որոնց թողած հարուստ ժառանգությանը կարող էր ծանոթանալ՝ շրջելով Գորիսի փողոցներով: Գորիսը՝ իր շրջակա գյուղական համայնքներով, հայտնի է նաև ինքնատիպ ճաշատեսակներով, որոնց պատրաստման բաղադրատոմսը, սերնդեսերունդ փոխանցվելով, հասել է մինչև մեր օրերը:

2.3 Աշխարհագրական դիրքն ու բնակլիմայական պայմանները

Գորիս քաղաքը գտնվում է Սյունիքի մարզի հյուսիս-արեւելյան հատվածում, Երեւան-Արցախ, Երեւան-Մեղրի-Իրան միջպետական ավտոմայրուղիների խաչմերուկում: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1398 մ, հեռավորությունը մայրաքաղաք Երևանից՝ 235 կմ, մարզկենտրոն Կապանից՝ 67 կմ: Աշխարհագրականորեն քաղաքը գտնվում է Գորիս (ներկայումս՝ Վարարակն) գետի հովտում, որը ծավալային տեսանկյունից բավականին ընդարձակ, խոր տաշտականման գոգավորություն է. գրունտների կազմաբանական տեսանկյունից լցված է գետային եւ գետահեղեղատային, ջրասառցադաշտային նստվածքներով: Քաղաքին հարող բնական լանդշաֆտները (խոր ձորերով ձեղքված՝ բրգաձեւ գագաթներով բարձրաբերձ ժայռերը, կիրճերն ու ապառաժ քարայրները) յուրօրինակ տեսք են տալիս Գորիսի քաղաքաշինական տեսքին: Քաղաքի կառուցապատումը ներդաշնակված է քաղաքի տարածքը կազմող բնության լանդշաֆտին, որն ստեղծում է գրավիչ քաղաքաշինական միջավայր համայնքի բնակիչների ու այցելուների համար:

Գորիս քաղաքի բնակչության հիմնական էթնոսը հայ է: Տեղի բնակչությունը խոսում է գորիսյան բարբառով: Գորիսը կառուցապատվել է ըստ հատակագծի, որի հիմքում ընկած էր ուղիղ եւ լայն փողոցների ցանցի կազմավորման սկզբունքը: Ըստ այդ սկզբունքի, տարիների ընթացքում շարքային կառուցապատմամբ հիմնվել են սեփական տներ՝ ինքնատիպ հայկական ճարտարապետական ոճով, որոնցից յուրաքանչյուրն ուներ ընդարձակ պարտեզ:

Կլիման բարեխառն լեռնային է: Քամիներից պաշտպանված ձորահովտում ձմեռը տաք է, մեղմ: Հունվար ամսին միջին ջերմաստիճանը կազմում է -1° C: Ամառը հով է լինում, հուլիս ամսվա միջին ջերմաստիճանը կազմում է $+20^{\circ}$ C: Տարեկան տեղումների քանակը հասնում է 700-800 մմ: Դրանք բաշխվում են անհավասարաչափ. մեծ քանակությամբ տեղումներ են լինում ապրիլ-մայիս և սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Քաղաքի եղանակի լրացնող տեսարան է թանձր մառախուղը: Մառախլապատ օրեր լինում են հատկապես գարնանն ու աշնանը:

2.4 Գորիս համայնքի հեռանկարային զարգացումը

Գորիս քաղաքի տարածքային եւ տնտեսական զարգացման գործում կարեւոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որոշված է ըստ «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի հիմնադրույթների», որը ելնում է քաղաքի հեռանկարային տարածքային

զարգացման հաշվարկված հնարավորություններից (քաղաքապատկան տարածքի դեմոգրաֆիական տարողունակության որոշման մեթոդով): Ըստ այդ հաշվարկների, քաղաքապատկան տարածքում կարող է բնակվել առավելագույնը 45.0 հազ. մարդ՝ չխախտելով տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը, ընդ որում աճի տեմպերի համար ժամկետներ չեն կանխատեսվում, քանի որ այն կախված է հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման տեմպից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

Գորիս համայնքում աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակնկալել բնական ռեսուրսների, հիմնականում սպասարկման, հումքային, գյուղատնտեսության հնարավորությունները ռացիոնալ օգտագործելով: Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների եւ գործարարների համատեղ գործունեությունը:

3. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ


2.3 Տեղական ինքնակառավարման մարմիններ

1996թ-ից Գորիս քաղաքում իրականացվում է տեղական ինքնակառավարում համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի: Գորիս քաղաքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձեւավորված տեղական իշխանությունները՝ քաղաքապետն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 15 անդամներով: Գորիս համայնքի ղեկավարի աշխատակազմը բաղկացած է 43 հոգուց: Քաղաքապետարանն ունի վարչական շենք, որը գտնվում է քաղաքի կենտրոնում, շենքի ընդհանուր վիճակը բարվոք չէ, աշխատակազմի համար պայմանները բավարար չեն, կահավորանքը դեռևս 1980-ական թվականներից է, քաղաքապետարանը մասնակի հագեցած է տեխնիկայով, սակայն այն բավարար չէ աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար: Համայնքի տեղական ինքնակառավարումն իրականացնող մարմնի եւ համայնքային կազմակերպությունների գործունեությունն առավել նպատակային եւ արդյունավետ դարձնելու, քաղաքային իշխանության կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը բարելավելու նպատակով քաղաքապետարանում հիմնվել է քաղաքացիների սպասարկման գրասենյակ (ՔՄԳ):

Խնդիրներ

- Քաղաքապետարանի շենքային պայմանների բարելավում,
- կահավորանքի թարմացում եւ տեխնիկայի ձեռք բերում,
- սեմինարների և թրեյնինգների միջոցով աշխատակազմի վերապատրաստում
- մատուցվող ծառայությունների որակի բարձրացում

Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը



Համայնքային ենթակայության հիմնարկները

h/h		Երեխաների թիվը	աշխատողների թիվը
1.	Թիվ 1 նախակրթական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	163	22
2.	Թիվ 2 նախակրթական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	253	25
3.	Թիվ 3 նախակրթական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	100	18
4.	Թիվ 4 նախակրթական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	75	16
5.	Թիվ 5 նախակրթական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	95	19
6.	Թիվ 6 նախակրթական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	100	18
7.	7 նախակրթական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	79	15
8.	Ա. Սաթյանի անվան երաժշտական	110	28

	դպրոց ՀՈԱԿ		
9.	Շ. Ազնավուրի անվան երաժշտական դպրոց ՀՈԱԿ	100	25
10.	Գ. Աշոտի անվան մշակույթի կենտրոն ՀՈԱԿ	70	61
11.	Գ. Պարոնյանի անվան արվեստի դպրոց ՀՈԱԿ	35	13
12.	Մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ	209	16
13.	Շախմատի դպրոց ՀՈԱԿ	26	6
14.	«Գորիս» ՏՆՏ ՓԲԸ	-	34

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1 Ժողովրդագրություն

Ըստ 2001թ-ի մարդահամարի Գորիս քաղաքն ունի 23.100 բնակիչ: Ըստ սեռատարիքային դասակարգման, բնակչության 51.2%-ը կազմում են տղամարդիկ, 48.8%-ը՝ կանայք ու աղջիկները:

Բնակչության տարիքային կազմը

Տարիքային խմբեր	0-5	6-15	16-18	19-64	65 եւ ավելի
բնակիչների թիվը	1535	2643	1086	14003	3833

Բնակչության սոցիալական կազմը՝

1.	սոցիալական կազմը	քանակը
2.	աշխատունակներ	13582
3.	նպաստառուներ	736
4.	նպաստների համակարգում փաստագրված ընտանիքների թիվը	976
5.	գործազուրկներ	1666
6.	միակողմանի ծնողազուրկ երեխաներ	118
7.	հաշմանդամներ	1767
8.	կենսաթոշակառու	3945
9.	տարեց կենսաթոշակառու՝ (75 եւ ավելի բարձր տարիքի)	820
10.	փախստականներ	15

11.	պատերազմի մասնակիցներ	31
12.	տնային տնտեսությունների թիվը	4650
13.	ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքներ	131

4.2 Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակը

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ-ի թիվ 51 որոշմամբ:

Համայնքի ենթակառուցվածքների գնահատում

h/h	կառույց	հասցե	Կառուցման տարեթիվ	մակերես՝ ք/մ	ընդհանուր վիճակը	Խնդիրը
1.	վարչական շենք N1	Անկախության 3	1953թթ.	1671.1	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել
2.	վարչական շենք N2	Մաշտոցի 3	1975թ.	2527.5	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել
3.	վարչական շենք N3	Նժդեհի 22	1988թ.	1016.1	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել
4.	«Գուսան Աշոտի» անվան մշակույթի կենտրոն	Մաշտոցի 5	1977թ.	2504.4	մասնակի բարվոք	հարդարման անհրաժեշտություն ունի
5.	Թիվ 1 նախակրթական ուսումնական հաստատություն	Գ. Աշոտի 24	1900թ.	1000	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել
6.	Թիվ 2 նախակրթական ուսումնական հաստատություն	Կոմիտասի 17	1982թ.	3047	մասնակի բարվոք	անհրաժեշտ է մասնակի վերանորոգել
7.	Թիվ 3 նախակրթական ուսումնական հաստատություն	Գետափնյա 15	1967թ.	1230	մասնակի բարվոք	անհրաժեշտ է մասնակի վերանորոգել

8.	Թիվ 4 նախակրթական ուսումնական հաստատություն	Բակունցի 56	1962թ.	865	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել
9.	Թիվ 5 նախակրթական ուսումնական հաստատություն	Արզումանյան 5	1973թ.	1600	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել
10.	Թիվ 6 նախակրթական ուսումնական հաստատություն	Սյունիքի 181	1973թ.	1060	մասնակի բարվոք	հարդարման անհրաժեշտություն ունի
11.	Թիվ 7 նախակրթական ուսումնական հաստատություն	Վանքի տափ 2	1987թ.	2446.3	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել
12.	Ա. Սաթյանի անվան երաժշտական դպրոց	Օրբելյանների 20	1970թ.	950.6	մասնակի բարվոք	անհրաժեշտ է մասնակի վերանորոգել
13.	Շ. Ազնավուրի անվան երաժշտական դպրոց ՀՈԱԿ	Ավանգարդ 5	1972թ.	1800	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել
14.	Շախմատի դպրոց ՀՈԱԿ	Անկախության 6	1920թ.	700	Մասնակի բարվոք	անհրաժեշտ է մասնակի վերանորոգել
15.	Ֆուտբոլի դաշտ	-	1970թ.	12000	Ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել
16.	Մինի ֆուտբոլի դաշտ	Անկախության 1	2006թ.	1800	Մասնակի բարվոք	անհրաժեշտ է մասնակի վերանորոգել
17.	մանկական զբոսայգի	Կոմիտաս 28	1920թ.	9400	ոչ բարվոք	բարեկարգման աշխատանքներն ընթացքում են
18.	քաղաքային զբոսայգի	Անկախության 51	1950թ.	14700	ոչ բարվոք	անհրաժեշտ է բարեկարգել
19.	խմելու ջրի ներհամայնքային ցանց	ք. Գորիս	1964թ.	66,7կմ	մասնակի բարվոք	60%-ը փոխվել է

20.	կոյուղու ցանց	ք. Գորիս	1964թ.	51,4կմ	ոչ բարվոք	անհրաժեշտ է փոխել
21.	ներհամայնքային ճանապարհներ ու փողոցներ	ք. Գորիս		46,3կմ	ոչ բարվոք	անհրաժեշտ է բարեկարգել
22.	գազամատակարարման ներհամայնքային ցանց	ք. Գորիս	1983-2000թթ.	47,0կմ	բարվոք	
23.	ռոռզման ներհամայնքային ցանց	ք. Գորիս		24կմ	մասնակի բարվոք	30%-ն է բարվոք վիճակում, անհրաժեշտ է վերանորոգել

4.3 Հողօգտագործում

համայնքի հողերն ըստ նշանակության	հա
համայնքի վարչական տարածքը	5039.13
գյուղատնտեսական հողեր	4030.88
արոտավայր`	2119.34
վարելահողեր	997.38
խոտհարք	270.71
այլ հողեր	643.45
բնակավայրերի հողեր	592.80
բնակելի կառուցապատման	279.9
հասարակական կառուցապատման	40.33
խառը կառուցապատման	7.44
ընդհանուր օգտագործման	88.36
այլ հողեր	176.76
արտադրական նշանակության հողեր	47.96
էներգետիկայի տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողեր	4.45

Անտառային հողեր	254.7
Հատուկ պահպանության	56.93
Հատուկ նշանակության	23.89
Ջրային	27.52

4.4 Գյուղատնտեսություն

Համայնքի տարածքում սեփականաշնորհված հողատարածքները. վարելահող՝ 668.68 հա, խոտհարք՝ 244.06 հա:

Համայնքային սեփականության հողերը կազմում են 3111.09 հա, որից վարելահող՝ 328.70 հա, խոտհարք՝ 26.65 հա, արոտ՝ 2118.74 հա, այլ հողատեսքեր 637 հա:

Վարձակալությամբ տրված հողատարածքներ 655.5 հա, որից վարելահող՝ 252.50 հա, խոտհարք՝ 6.00 հա, արոտ՝ 397.00 հա:

Պետական պահուստի ֆոնդերի հողերը՝ 5.75 հա:

Սեփականաշնորհված 668.68 հա հողատարածքներում ցանվում են հացահատիկային մշակույթներ՝ ցորեն, գարի և բանջարբոստանային կուլտուրաներ:

Քաղաքը շրջապատող անտառները հարուստ են բազմազան հատապտուղներով: Հողատեսքերի դիրքադրությունը միանգամայն բարենպաստ է հացահատիկային կուլտուրաների արտադրության ու անասնապահության համար: Հացահատիկային կուլտուրաների արտադրությունն ու անասնապահությունը հանդիսանում են Գորիս համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող ոլորտ: Մակայն այս երկու ոլորտները ներկայումս ունեն միջին զարգացվածության տեմպ, որը պայմանավորված է ոլորտների ցածր կապիտալացման աստիճանով ու վերամշակման տեխնոլոգիաների բացակայությամբ:

Խնդիրներ

- Գյուղատնտեսության ոլորտի հեռանկարային զարգացումն ապահովելու համար՝ նպաստել մանր տնտեսավարողների հողերի խոշորացմանը,
- բանջարա-բոստանային կուլտուրաների մշակության արդյունավետությունը, բարձրացնելու համար ընդլայնել ռոտզման ցանցի հասանելիությունը,
- խրախուսել հանրապետությունում մեծ պահանջարկ ունեցող լոբու, թթի օդու մշակությունը:

4.5 Արդյունաբերություն. համայնքի ձեռնարկությունները

Գորիսում գործող ձեռնարկություններն ըստ իրենց կազմակերպարկավական տեսակի շահույթ հետապնդող առևտրային կազմակերպություններ են՝ ՍՊԸ-ներ, իսկ որոշ ձեռնարկություններ հանդես են գալիս «անհատ ձեռնարկատեր»-ի կարգավիճակով: Գորիսում տեղակայված գործող ձեռնարկություններն ըստ իրենց գործունեության տեսակի ներառում են հետևյալ հիմնական ոլորտները.

- Էլեկտրոէներգիայի արտադրություն
- Գյուղմթերքների արտադրություն,

- շինարարական քարի մշակություն,
- կապիտալ ու ընթացիկ շինարարություն,
- շինանյութերի մեծա-մանրածախ առևտուր,
- կենցաղային ու սննդի մանրածախ առևտուր,
- տուրիզմի ոլորտում ծառայությունների մատուցում:

Գործիսում խորհրդային տարիների սոցիալ-տնտեսական զարգացման պլանային օրենքներով գործող արդյունաբերական համալիրները գրեթե փլուզված են, սակայն ունեն բավականին ներկայացուցչական կապիտալ՝ շենք-շինություններ, սարքավորումներ, շրջանառու միջոցներ:

- «Գամմա» ԲԲԸ-ն մասնագիտացած է ճշգրիտ սարքերի արտադրության մեջ եւ ներկայումս թողարկում է փոքր քանակությամբ արտադրանք,
- «Զանգեզուրի տեքստիլ կոմբինատ» ԲԲԸ-ն մասնագիտացած է կոշտ կտորեղենից արտադանքների թողարկման մեջ եւ ներկայումս գործում է իր հզորության 10-20%-ի սահմաններում,
- «Գորիսի տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ-ն մասնագիտացած է տրիկոտաժեղենի արտադրության մեջ, սակայն բացառապես չի գործում,
- «Գորիսի միկրոշարժիչ գործարան» ԲԲԸ- մասնագիտացած է փոքր շարժիչների արտադրության մեջ, վերապրոֆիլավորվել է պլաստիկե պատուհաններ արտադրող փոքր ձեռնարկության,
- «Արմեն-կարպետ» ԲԲԸ-ի Գորիսի մասնաձյուղ- չի գործում:

4.6 Բնության եւ շրջակա միջավայրի պահպանություն

Շրջակա բնական միջավայրի պահպանության առումով առաջնային խնդիր է քաղաքի սանամաքրումը: Գորիսը չունի կոյուղաջրի մաքրման կայան, կոյուղու կոլեկտոր, եւ սկսած Ակներ ու Վերիշեն գյուղերից կոյուղին լցվում է Վարարակն գետը, որն անցնելով քաղաքի միջով գարշահոտություն է տարածում, խաթարում է քաղաքի սանիտարահիգիենիկ վիճակը, աղտոտում է գետի ջուրն ու ֆլորան: Գետի ջուրը տեղի եւ հարակից գյուղերի բնակիչներն օգտագործում են ռոռգման նպատակով, որտեղ աճեցվում են գյուղմթերքներ: Բացի այդ, բնակչությունը գետն է լցնում նաեւ կենցաղային աղբը: Քաղաքի սանիտարական վիճակի խաթարման պատճառ է դառնում նաեւ դիահերձարանի բացակայությունը՝ հերձուքը իբրեւ աղբ փոխադրվում է աղբանոց: Դիահերձարանի համար հողահատկացումը կատարվել է եւ ՀԲ-ի միջոցներով կառուցվում է դիահերձարան, սակայն ֆինանսական տղության պատճառով նախագիծը փոփոխության է ենթարկվել՝ կրճատվել է կառույցի տարածքը:

Քաղաքը չունի փակ շուկա, բոլոր գյուղմթերքների առևտուրը կատարվում է բաց տարածքում, որով ապահովված չէ սննդի անվտանգությունը: Չունի նաեւ սպանդանոց եւ չնայած ֆերմերային տնտեսությունների առկայությանը, ըստ էության անասունների սպանդը կատարվում է նաեւ հասարակական վայրերում:

Բացի այդ, քաղաքում կանաչապատ տարածքները շատ քիչ են, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներով (գրոսայգիներ, պուրակներ) բնակչության ապահովվածությունը ցածր է: Կանաչ տարածքների զգալի մասը կարիք ունեն մեծածավալ վերականգնողական միջոցառումների: Ներկայումս կանաչապատվում է քաղաքի հրապարակը, որը պետք է շարունակել քաղաքի մյուս հատվածներում, սակայն դրան խոչընդոտում է կանաչ տարածքների առանձնացված ռոռգման համակարգ չունենալը: Չափազանց կարելոր է քաղաքի ինժեներական կառույցների բարելավման հարցը՝ այն սկսելով սանամաքրումից, գետի ափապատման աշխատանքներից, սելավատարների կառուցումից:

Խնդիրները

- կոյուղու գլխավոր կոլեկտորի կառուցում
- Վարարակն գետը գերծ պահել կոյուղաջրերից ու կենցաղային աղբից,
- Վարարակն գետում իրականացնել ավապատման աշխատանքներ
- ավելացնել քաղաքի կանաչապատ տարածքները,
- բարեկարգել զբոսայգիները,
- համայնքի աղբավայրում իրականացնել ցանկապատման աշխատանքներ
- աղբի նախնական տեսակավորման համար փողոցներում տեղադրել աղբամաններ,
- աղբավայրում ստեղծել աղբի տեսակավորման հնարավարություն
- գյուղմթերքների վաճառքի համար կառուցել փակ շուկա,
- կառուցել սպանդանոց՝ կենդանիների մորթը թույատրված նորմերում կատարելու համար,
- ռոռոգման համակարգի հիմնում,
- ծառատունկի իրականացում փողոցներում,
- կանաչապատ եւ ծաղկապատ տարածքների ավելացում,
- քաղաքում տարբեր առեւտրային կետերի եւ մեքենանների լվացման կետեր հիմնելու թույլտվությունները տալ շրջակա միջավայրի եւ սանիտարահիգիենիկ կանոնները հաշվի առնելով:
- Հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագովազդների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով՝ ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում

4.7 Հաղորդակցություն, տրանսպորտ եւ կապ

Գորիս համայնքն ունի համայնքային ենթակայության 46.3 քկմ մակերեսով փողոցներ եւ ճանապարհներ: Ճանապարհների եւ փողոցների մեծ մասն անբարեկարգ է, ճանապարհային նշաններ չկան, քաղաքի որոշ խաչմերուկներում տեղադրվել են երթուղի կարգավորող լուսացույցեր, սակայն այն դեռեւս բավարար չէ եւ անհրաժեշտ է լուսացույցեր տեղադրել բոլոր խաչմերուկներում, փողոցներում ավելացնել ճանապարհատրանսպորտային երթուղիները կարգավորող նշանները: Գորիս քաղաքի ներհամայնքային ճանապարհների ընթացիկ սպասարկումն (անցանելիության ապահովում, ձմեռային սպասարկում) իրականացնում է «Գորիստոն» ԲԲԸ-ն: Գորիս քաղաքի միջով հյուսիսից-հարավ ու հյուսիսից-արեւելք ուղղություններով անցնող միջպետական երկու ճանապարհներն սպասարկվում են տրանսպորտի նախարարության սահմանած կարգով ու ձեւով:

Քաղաքում բնակչության փոխադրումն իրականացվում է ավտոբուսի, երթուղային տաքսու միջոցով: Ներհամայնքային հասարակական տրանսպորտով երթուղիության կազմակերպման համար քաղաքապետարանը պարբերաբար կազմակերպում է ավտոբուսային ու միկրոավտոբուսային երթուղիների մրցույթներ: Հաղթող կազմակերպությունները մրցույթի սահմանած ժամանակահատվածում ու սահմանած կարգով, համայնքի բնակչության համար իրականացնում են տրանսպորտային ծառայություններ՝ երթուղիների տրանսպորտային սպասարկմամբ:

Գորիս քաղաքը, շնորհիվ իր աշխարհագրական դիրքի եւ պատմական հարուստ ժառանգության, հետաքրքրություն է ներկայացնում եւ տուրիստական քաղաքի վերածվելու բոլոր հնարավորություններն ունի: Քաղաքի ընդհանուր տեսքի համար չափազանց կարևոր է քաղաքի բարեկարգումը՝ մայրերի բարեկարգումը, փողոցների լուսավորությունը, աղբամանների տեղադրումը, սանիտարական վիճակի ապահովումը: Մասնավորապես քաղաքում կան

կիսակառույց շենքեր, որոնք սեփականաշնորհված են, սակայն 20 տարուց ավելի է ոչինչ չի արվում շինություններն ավարտին հասցնելու համար: Այդ վիճակով դրանք խաթարում են քաղաքի ընդհանուր տեսքը:

Համայնքի տարածքում գիշերային արտաքին լուսավորության ցանցը ապահովում է քաղաքի անհրաժեշտ գիշերային լուսավորության ծածկույթի 40 %-ը: Կենտրոնական փողոցները չունեն լուսավորություն, որի պատճառով երեկոյան ժամերին դժվարանում է տեղաշարժը քաղաքում: Քաղաքի լուսավորությունն առաջնային կարեւորության հարցերից է եւ անհրաժեշտ է կտրուկ ընդլայնել լուսավորության ցանցը:

Խնդիրները

- ճանապարհային նշանների տեղադրում քաղաքում
- երթուղի կարգավորող լուսացույցերի ավելացում խաչմերուկներում
- ճանապարհների նշագծում
- ընդլայնել փողոցների լուսավորությունը եւ ավելացնել նոր լուսակետեր քաղաքի մյուս հատվածներում,
- մայթերի բարեկարգում,
- կիսակառույց շենքերի ավարտում,
- կանգառների կառուցում:

4.8 Բնակարանային-կոմունալ տնտեսություն

Համայնքում կա 2640 առանձնատուն 113 հազ. քմ տարածքով եւ թվով 128 բազմաբնակարան շենքեր, որից վթարային են 13-ը: Վթարային շենքերում բնակվում է 292 բնակիչ: Բազմաբնակարան շենքերի կառավարումն իրականացնում է «Գորիս» ՏՆՏ ՓԲԸ-ն: Համայնքում ներկայումս գործում է մեկ համատիրություն «Սանդի ձոր», այն ընդգրկում է ընդամենը երկու շենք (40 ընտանիք): Համայնքում աղբահանությունն ու փողոցների մաքրումն իրականացնում է «Գորիս» ՏՆՏ ՓԲԸ-ն՝ քաղաքապետարանի հետ կնքված երկկողմ պայմանագրի համաձայն: Աղբը տեղափոխվում եւ կուտակվում է կենտրոնացված աղբավայր, որտեղ պարբերաբար կատարվում է բնահողով ծածկում ու սանիտարական այլ միջոցառումներ: Աղբահանումն իրականացվում է ոչ բավարար տեխնիկայի պայմաններում, փողոցներում աղբամաններ չեն տեղադրվել եւ բնակիչներն աղբը դնում են մայթերին, որտեղից աղբահավաք մենքենան հավաքում է: Աղբամանների բացակայությունը բացասաբար է անդրադառնում քաղաքի արտաքին տեսքի եւ սանիտարահիգիենիկ պայմանների վրա:

Խնդիրներ

- Վթարային 13 շենքերում իրականացնել ամրացման աշխատանքներ,
- ստեղծել նոր համատիրություններ,
- ապահովել բազմաբնակարան շենքերի տանիքների, տանիքների ջրհորդանների, շենքերը սնուցող ջրագծերի, կոյուղագծերի, շքամուտքերի վերանորոգումը.
- բարելավել աղբահանումը,
- ձեռք բերել նոր աղբահավաք մեքենա,
- փողոցներում աղբամանները փոխարինել կափարիչով աղբամանների և ավելացնել դրանց քանակը
- Կառուցապատել ու բարեկարգել թաղամասերի բակային տարածքները

4.9 Կրթություն

Գորիս քաղաքում գործում է 4 հիմնական, 2 ավագ եւ 1 հատուկ դպրոց, որոնցից հիմնանորոգվել է թիվ 4 ավագ դպրոցը: Մասնակի վերանորոգվել են թիվ 1 ավագ, 2, 3 եւ հիմնական դպրոցները եւ թիվ 1 հատուկ դպրոցը: Հիմնանորոգման կարիք ունի թիվ 5 հիմնական դպրոցը: Հանրակրթական դպրոցներում սովորում է 2575 աշակերտ, որտեղ աշխատում են 280 ուսուցիչներ: Գորիս համայնքում գործում են 7 նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Համայնքի ղեկավարը, որպես պարտադիր լիազորություն, կազմակերպում և կառավարում է այդ հաստատությունների գործունեությունը, դրանց շահագործման և վերանորոգման աշխատանքներն՝ ապահովելով նախադպրոցական ոլորտի պետական քաղաքականության իրականացումը: Համայնքի նուստ-ում իրականացվում է լիարժեք կրթություն ԿԳ նախարարության կողմից հաստատված կրթական ծրագրերին համապատասխան :

Սակայն 7 նախադպրոցական ուսումնական հաստատություններից միայն թիվ 2 և թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատություններն են հիմնովին վերանորոգված: Վերանորոգման կարիք ունեն թիվ 1, 3, 4, 5 և 7 նուստ-ները: Թիվ 3 և թիվ 7 նուստ-ները կարիք ունեն նաև լոկալ ջեռուցման: Աշխատողների թիվը՝ 122 հոգի, հաճախող երեխաների քանակը՝ 865, խմբերի թիվը՝ 30:

Գորիս համայնքում գործում են համայնքային ենթակայության 5 արտադպրոցական ուսումնական հաստատություններ՝

- Աշոտ Սաթյանի անվան երաժշտական դպրոց/ 28աշխատող, 110 աշակերտ/
- Շարլ Ազնավուրի անվան երաժշտական դպրոց /25աշխատող, 100 աշակերտ/
- Գևորգ Պարոնյանի անվան արվեստի դպրոց / 13 աշխատող, 35աշակերտ/
- Ա. Օրդյանի անվան շախմատի դպրոցը (6 աշխատող, 22 երեխա),
- Մարգա-ամողջարանային համալիրը (15 աշխատող, 189 երեխա)

Համայնքում գործող ԲՈՒՀ-ական հաստատություններն են՝

Բուհեր	սովորողների թիվը
Գորիսի պետական համալսարանը	1497 որից՝ հեռակա 950, ստացիոնար 390, մագիստրատուրա 157
Մանկավարժական քոլեջ	250
Գորիսի գյուղատնտեսական պետական քոլեջը	225
Երևանի կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղը	25
«Սյունիք» ինստիտուտ	204 որից՝ հեռակա 150, ստացիոնար 54

Խնդիրներ

- Նախադպրոցական ուսումնական հաստատությունների /նուստ/ շենքային պայմանների բարելավում
 - թիվ 1 նուստ՝ բացօթյա պատշգամբների և տանիքի վերանորոգում

- թիվ 3 նուև՝ բացօթյա պատշգամբների վերանորոգում, խոհանոցի գազաֆիկացում, ջեռուցման համակարգի իրականացում,
- թիվ 4 նուև՝ խոհանոցի և խմբասենյակների սան-հանգույցների վերանորոգում,
- թիվ 5 նուև՝ շենքի հիմնովին վերանորոգում,
- թիվ 7 նուև՝ խոհանոցի, խմբասենյակների սան-հանգույցների և դահլիճի վերանորոգում, ջեռուցման համակարգի իրականացում:
- Նախադպրոցական ուսումնական հաստատություններում նյութատեխնիկական և փափուկ գույքի բազայի բարելավում, նախադպրոցական հասակի երեխաների խնամքի և դաստիարակության որակյալ կազմակերպում
- Նախադպրոցական ուսումնական հաստատությունների աճող ֆինանսավորում պետական և համայնքային բյուջեներից,
- Համացանցի հաստատում նախադպրոցական հաստատություններում, համակարգիչների ձեռք բերում:
- Համագործակցություն տարբեր միջազգային, հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հետ՝ հաստատությունների նորոգման, կահավորման, ուսումնանյութական հագեցվածության ապահովման նպատակով:
- Գորիսի Աշոտ Սաթյանի անվան երաժշտական դպրոցի ջեռուցման համակարգի ապահովում,
- Գորիսի Շարլ Ազնավուրի անվան երաժշտական դպրոցի մասնաշենքի վերանորոգում,
- Գորիսի Գևորգ Պարոնյանի անվան արվեստի դպրոցի խմբասենյակների վերանորոգում,
- Արտադպրոցական մասնագիտական դպրոցներում ջեռուցման համակարգի իրականացում,
- երաժշտական և արվեստի դպրոցների անշարժ գույքի , երաժշտական գործիքների թարմացում, համակարգչի ձեռք բերում,

4.10 Ֆիզիկական կուլտուրա եւ սպորտ

Համայնքում գործում են՝

- Ա. Օրոյանի անվան շախմատի դպրոցը (6 աշխատող, 22 երեխա),
- մարզա-առողջարանային համալիրը (15 աշխատող, 189 երեխա)

Համայնքում գործող, սակայն ոչ համայնքային ենթակայության մարզական կազմակերպություններ.

- Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանային մանկապատանեկան մարզադպրոցը,
- Սևան սպորտային ընկերության մասնաճյուղը:

Խնդիրներ

- Մարզադպրոցի ըմբշամարտի դահլիճի նորոգում
- Մարզադպրոցի Ծանրամարտի դահլիճի նորոգում
- Ֆուտբոլի դաշտի նորոգում
- Բակային սպորտային հրապարակների նորոգում
- Նոր սպորտային ձևերի ներդրում
- Գույքի ձեռքբերում

4.11 Մշակույթ

Քաղաքը հարուստ չէ մշակութային օջախներով, սակայն այդ բացը կարող է լրացնել «Հին Գորիս»-ն՝ իր ճարտարապետական ինքնատիպ ոճով կառուցված տներով ու քարանձավներով, որոնցից շատերը գտնվում են վթարային վիճակում: Հին Գորիսին անհրաժեշտ է տալ արգելոցի կարգավիճակ, պահպանել այդ տները եւ դրանք վերածել ժամանցային, ինտելեկտուալ վայրերի, սպասարկման ծառայություններ մատուցող կենտրոնների, պատկերասրահների: Անհրաժեշտ է վերականգնել Հին Գորիսում պահպանված ձիթհանը, բրուտանոցը, որը տեղաբնակների զբաղմունքի ու կենցաղավարության մասին պատմող եզակի նմուշներ են եւ հետաքրքրական կարող են լինել քաղաքի այցելուների համար: Քարանձավների որոշ հատվածներ հնարավոր է վերածել բնական պատկերասրահների: Համայնքում հաշվվում են 227 անուն պատմաճարտարապետական հուշարձաններ:

Համայնքում գործող համայնքային պատկանելիության մշակութային կառույցը «Գուսան Աշոտի» անվան մշակույթի տունն է, որն ունի 61 աշխատակից: Մշակույթի կենտրոնի վարչական շենքը վերանորոգված է, սակայն չունի ջեռուցման կենտրոնացված համակարգ: Մշակույթի տունն ունի 110 տեղանոց դահլիճ, այս շենքում են տեղավորված երկրագիտական թանգարանն ու քաղաքային գրադարանը: Մշակույթի կենտրոնն իր մեջ ներառում է հետեւյալ ստորաբաժանումները՝ մշակույթի բաժին, գրադարանային բաժին, թանգարանային բաժին, պատկերասրահ, զբոսայգի: Մշակույթի տանը՝ 2003թ.-ին կոամետիկ հարդարում է իրականացվել, շենքը չի ջեռուցվում:

Խնդիրներ

- շենքային պայմանների բարելավում, ջեռուցման խնդրի լուծում,
- մշակութային բազմաբնույթ միջոցառումների կազմակերպում,
- Բակունցյան ավանդական շաբաթը լրացնել մշակութային միջոցառումներով, սիմպոզիումներով
- անցկացնել երաժշտական, գորգագործական և այլ մշակութային մրցութային փառատոներ:

4.11.1 Թատրոն

Գորիսում գործում է Վաղարշ Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոնը, որը մշակույթի նախարարության ենթակայության է: Թատրոնն ունի 46 աշխատող: Թատրոնի շենքում վերջին տարիներին կոամետիկ հարդարում է կատարվել: Այստեղ են անցկացվում նաեւ քաղաքային մեծ մշակութային միջոցառումները, քանի որ քաղաքում ամենամեծ դահլիճը թատրոնին է՝ 540 տեղանոց:

4.11.2 Թանգարաններ

Քաղաքում գործում է երկու թանգարան: Ընթացքում է հայ արձակի հայտնի դեմքերից ծնունդով գորիսցի Սերո Խանգադյանի տուն-թանգարանի հիմնումը: Գորիսում է գտնվում հայ մեծանուն արձակագիր Ակսել Բակունցի տուն-թանգարանը: Մշակույթի նախարարության կազմում գործող այս տուն-թանգարանը 2011-2012թթ.-ին վերանորոգվել է, 2013թ.-ին նախատեսվում է լուծել ջեռուցման խնդիրը:

Երկրագիտական թանգարանը համայնքային ենթակայության կառույց է: Գործիսի Երկրագիտական թանգարանը Սյունիքի մարզում առաջին թանգարանն է, հիմնադրվել է 1940-ական թվականներին: Սկզբնապես գործել է եկեղեցում, այժմ մշակույթի տան հարմարեցված տարածքում: Թանգարանում պահպանվում են 5000-ից ավելի ցուցանմուշներ, հիմնականում՝ հնագիտական նյութեր, որոնք հայտնաբերվել են պեղումների ժամանակ կամ պատահականորեն ու կենտրոնացվել են այնտեղ: Հնագիտական եւ ազգագրական նյութերը Սյունիքի կենցաղն արտացոլող կահ-կարասիներ են, աշխատանքային գործիքներ, գործվածքներ եւ այլն: Բավականաչափ հարուստ է թանգարանի փաստաթղթերի ու լուսանկարների բաժինը: Շենքային պայմանները թանգարանային նմուշներն ամբողջությամբ ցուցադրելու հնարավորություն չեն ընձեռում: Տինանսական միջոցների բացակայության պատճառով վերջին տարիներին թանգարանը չի համալրվել նոր ցուցանմուշներով: Շենքն, ընդհանուր առմամբ, թանգարանի կարիքներին չի համապատասխանում՝ չունի օդափոխության, ջեռուցման եւ անվտանգության համակարգ: Համայնքապետարանը դրամական աջակցություն չի ցուցաբերել ցուցանմուշներ ձեռք բերելու համար: Սկզբնական շրջանում Սյունիքի բոլոր թանգարանային նմուշները կենտրոնացվել են Գործիսում, մինչեւ Կապանում եւ Սիսիանում թանգարանային շենքերի կառուցումը:

Խնդիրները

- Երկրագիտական թանգարանի մակերեսների ընդլայնում և վերազինում,
- ցուցադրությունների գիտական մակարդակով ներկայացում
- մասնագետներով համալրում
- թանգարանային ֆոնդի անձնագրավորման իրականացում և թվայնացում
- ցուցանմուշների նորովի, մոդեռնացված, թարգմանված ցուցադրություն,
- զբոսաշրջային տուրիզմի մեջ թանգարանային այցերի ներառում,
- քաղաքում ուղղորդող գովազդային նշանների տեղադրում:

4.11.3 Գրադարաններ

Քաղաքում գործում է 3 գրադարան, որից մեկը գտնվում է «Գուսան Աշոտի» անվան մշակույթի կենտրոնի շենքում, երկրորդը՝ Գուսան Աշոտի փողոցում գտնվող մանկական գրադարանը, շենքային վատթար պայմաններում է գտնվում: Գրադարաններից երրորդը գործում է Վանքի Տափ թաղամասի նկուղային հարկում, դարձյալ շենքային վատթար պայմաններում: Գրադարանները համալրում չունեն նոր գրականությամբ, պահպանվել է խորհրդային տարիների գրքային ֆոնդը՝ 110224 անուն գիրք, որը չի կարող ներկայիս ընթերցողի հետաքրքրությունը բավարարել եւ այդ առումով նույնպես գրավիչ չէ բաժանորդների համար: Գրադարանային բաժինը բաղկացած է կենտրոնական մանկական եւ 3 մասնաճյուղ գրադարաններից:

Խնդիրները

- Գրադարանների շենքային պայմանների բարելավում եւ կապիտալ վերանորոգում,
- գրադարանների գրքային ֆոնդի համալրում,
- անհրաժեշտ գույքի և գրադարանային սարքերի ու պարագաների ձեռք բերում,
- գրադարաններում գրական ու ստեղծագործական միջոցառումների կազմակերպում,

- ընթերցողի հետ կապն ամրապնդող միջոցառումների նախատեսում:

4.11.4 Ջրոսայգիներ

Քաղաքում առկա երկու զբոսայգիներից մեկի՝ մանկական զբոսայգու մի մասը վարձակալության է հանձնվել: Վարձակալը ներկայացրած ծրագրի համաձայն վերանորոգման ու բերեկարգման աշխատանքներ է իրականացնում այգում՝ տեղադրվել են կառուսելներ և իրականացվում են բարեկարգման աշխատանքներ:

Ջրոսայգիներից երկրորդն անմխիթար վիճակում է եւ չի ծառայում որպես հանգստի գոտի: Ծառուղիների քանակն անբավարար է, չունի գիշերային լուսավորություն եւ այլն:

Խնդիրները

- նոր ծառուղիների հիմնում այգում,
- կարուսելներով և ատրակցիոններով համալրում,
- նստարանների ավելացում,
- աղբամանների տեղադրում,
- այգում գիշերային լուսավորության ապահովում:

4.11.5 Համայնքի պատմության և մշակութային հուշարձանները

Գորիս քաղաքի մշակութային ժառանգության 227 օբյեկտներին ՀՀ Կառավարության որոշմամբ տրվել է հուշարձանի կարգավիճակ, որոնցից 127-ին հանրապետական նշանակություն, իսկ 150-ին՝ տեղական: Պատմամշակութային ժառանգության գլխավոր առանձնահատկությունն ընդարձակ, խիստ արտահայտիչ, անկրկնելի գեղատեսիլ լանդշաֆտում միջնադարյան շրջանում փողոցների ու թաղամասերի ազատ, բնական հատակագծով ժայռերի ու քարանձավների մեջ ձևավորված հին մասի /ներկայումս լքված/ և հիմնականում 19-րդ դարում փողոցների ուղղանկյուն հատակագծային ցանցի վրա՝ ինքնատիպ ճարտարապետություն ունեցող բնակելի ու հասարակական շենքերով կառուցապատված մասի համադրությամբ ստեղծված քաղաքաշինական համակարգն է: Մշակութային ժառանգության առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաև թե ժայռափոր, և թե 19-րդ դարում կառուցված բնակելի տներն ու հասարակական շենքերը:

Խնդիրները

- համայնքի պատմամշակութային հուշարձանների ցանկի խմբագրում
- «Հին Գորիս» պատմական կենտրոնի վերականգնման նախագծային աշխատանքների իրականացում
- պատմամշակութային հուշարձանների նկատմամբ ուշադրություն բարձրացում թե պետության, թե համայնքի կողմից
- պատմամշակութային հուշարձանների պահպանության ուղված միջոցառումների իրականացում
- ոչ բարվոք պատմամշակութային հուշարձանների վերականգնում համար ֆինանսական միջոցների հայթայթում

4.12 Առողջապահություն

Համայնքում գործում են 2 խոշոր բուժական հիմնարկություններ՝ «Դիագնոստիկ» կենտրոնը, «Գորիս» բժշկական կենտրոնը՝ 301 աշխատողով: «Դիագնոստիկ» կենտրոնը չունի սեփական շենք և տեղակայված է համայնքի թիվ 1 վարչական շենքում, որի շենքային պայմանները ոչ բարվոք վիճակում են և չեն համապատասխանում բուժհաստատությանը: «Գորիս» բժշկական կենտրոնի շենքային պայմանները 2010թ-ին բարելավվել են Համաշխարհային բանկի ֆինանսական միջոցների հաշվին՝ վերանորոգվել է նախկին շենքը և կառուցվել է նոր մասնաշենք, համալրվել է նոր սարքավորումներով: «Գորիս» բժշկական կենտրոնի պոլիկլինիկայի շենքն ունի կապիտալ վերանորոգման և սարքավորումներով համալրման կարիք:

«Գորիս» բժշկական կենտրոնի դերը տարածաշրջանում կենսականորեն կարևոր է, քանի որ սպասարկում է տարածաշրջանի մեծաքանակ բնակչությանը: Կենտրոնը հազեցած է բժշկական արդիական սարքավորումներով ու գույքով: 110 մահճակալով հիվանդանոցը ռազմավարական մեծ նշանակություն ունի և լինելով Արցախի ու ՀՀ առողջապահական համակարգերի միասնականության եւ արդիականացման կարևոր օղակներից մեկը, նպաստում է սահմանամերձ շրջանների բնակչության որակյալ եւ անհրաժեշտ ծավալի բուժօգնության իրականացմանը, կենտրոնում բուժվում են նաև օտարերկրացիները:

«Գորիս» բժշկական կենտրոնն իրականացնում է լայնածավալ ամբուլատոր եւ ստացիոնար բուժօգնություն: Կենտրոնի կազմում ներառված են թերապեւտիկ, վիրաբուժական, ինֆեկցիոն, մանկական, մանկաբարձական, գինեկոլոգիական, վերակենդանացման եւ տուբերկուլյոզային բաժանմունքերը: Կենտրոնը տարածաշրջանային առողջապահական կենտրոնի վերածվելու բոլոր նախադրյալներն ունի:

Խնդիրները

- պոլիկլինիկայի կապիտալ վերանորոգում եւ արդիական բժշկական սարքերով համալրում,
- կադրերի վերապատրաստում,
- երիտասարդ կադրերի ներգրավում,

4.13 Արտաքին կապեր և հարաբերություններ

Գորիս համայնքը արտաքին հարաբերությունների հարթակում առաջին քայլերն իրականացրել է դեռևս 1992թ-ին, երբ ֆրանսիական Վիեն քաղաքի հետ ստորագրվեց համագործակցության հուշագիր, որն այս քսան տարիների ընթացքում մի քանի անգամ թարմացվել է և այժմ հանդիսանում է համագործակցություն մեկ տասնյակից ավելի բնագավառներում: Վերոնշյալ համագործակցության շրջանակներում համայնքում իրականացվել են բազմաթիվ ծրագրեր, որոնք ուղղված են համայնքում տուրիզմի, համայնքի կոմունալ տնտեսության (փողոցային լուսավորություն, կանաչապատում, աղբահանություն), ֆրանսախոսության զարգացմանը և համայնքի պատմամշակութային ժառանգության պահպանմանը:

2008թ.-ին համագործակցության հուշագիր է ստորագրվել նաև Բելրուսի Նեսվիժ քաղաքի հետ: Իրականացվել են փոխայցելություններ ձեռք են բերվել տարբեր բնագավառներում համագործակցության ընդլայնման պայմանավորվածություններ:

Արտաքին հարաբերություններում Գորիս համայնքը համագործակցում է նաև տարբեր միջազգային և դոնոր կազմակերպությունների հետ, որոնց հետ համատեղ իրականացվել են համայնքի համար առաջնահերթ խնդիրների լուծման միտված ծրագրեր՝ CHF կազմակերպության հետ համատեղ իրականացվել են քաղաքի հիմնական աղբահավաք կետերի ցանկապատի կառուցում, քաղաքային զբոսայգու լուսավորության ցանցի արդիականացում, Փրկենք երեխաներին կազմակերպության հետ՝ թիվ 2 և 6 նախադպրոցական հաստատությունների և «Գուսան Աշոտի» անվան մշակույթի տան հիմնանորոգում, GIZ կազմակերպության հետ՝ ոռոգման ցանցի բարելավման, հանրակացարանի տանիքի, կոյուղագծերի վերանորոգման և քաղաքացիների սպասարկման գրասենյակի նորոգման աշխատանքներ, USAID RTI կազմակերպության հետ՝ աղբահանության ռազմավարության մշակում և աղբահավաք մեքենայի ձեռքբերում, UNHCR կազմակերպության հետ՝ փախստականների համար բազմաբնակարան շենքերի կառուցում, Շվեցարիայի զարգացման և համագործակցության գործակալության հետ՝ սոցիալապես անապահով ընտանիքների համար բնակարանների կառուցում, Համաշխարհային բանկի հետ՝ «Գորիս» բժշկական կենտրոնի շենքի և Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի շենքի կառուցում:

Խնդիրները

- Միջազգային դոնոր կազմակերպությունների համագործակցության ոչ բավարար մակարդակ
- Համագործակցող քույր-քաղաքների փոքր թիվ
- Արտաքին ներդրողների համար նպաստավոր պայմանների ցածր մակարդակ
- ՀՀ սահմաններից դուրս համայնքի ներկայացման ցածր մակարդակ

4.14 Համայնքի պատմամշակութային ժառանգությունը. զբոսաշրջություն

Գորիս քաղաքի ինքնատիպ ու գրավիչ ճարտարապետական տեսքը, հիասքանչ բնությունը, նախաքրիստոնեական ու քրիստոնեական մշակութային ժառանգության առկայությունը, պատմական տեսարժան վայրերով հարուստ լինելը, զանգեզուրյան հարուստ ավանդույթներն ու կենցաղը քաղաքը գրավիչ են դարձրել տուրիզմի համար: Քաղաքում տարեց-տարի ավելանում է տուրիստների թիվը, որին նպաստեց նաև «Տաթեյեր» ճոպանուղու կառուցումը՝ հեշտացնելով Տաթեյ վանական համալիր այցելուների մուտքը: Խնձորեսկի քարանձավներ այցելուների հոսքի ավելացմանը նպաստեց նաև ճոճվող կամրջի կառուցումը: Վերջին տարիներին քաղաքում հիմնվել են բազմաթիվ հյուրանոցներ, այդ թվում նաև բնակիչներից շատերը սեփական տունը հարմարեցրել են հյուրանոցային պայմանների, որը աշխատատեղերի ու ընտանեկան բիզնես ծավալելու լավագույն օրինակներից է դարձել: Տարածաշրջանը հարուստ է զբոսաշրջիկներին հետաքրքրող նաև այլ զարմանահրաշ ու չքնաղ վայրերով, որոնք մինչ այժմ չեն ներառվել զբոսաշրջային երթուղիներում, ինչպես օրինակ, Խնածախի կիրճը, Իշխանասարը, Հին Հարժիս գյուղը եւ այնտեղ գտնվող զանազան նախաքրիստոնեական պաշտամունքի կոթողներ, 13-14-րդ դարի քարվանսարան, Ուխտասարի ժայռապատկերները, Բղենո Նորավանքը եւ Բարձրավանք, Ծիծեռնավանքը, Միսիանի տարածաշրջանում գտնվող բազմաթիվ տեսարժան հուշարձաններ Միսավանք, Զորաց քարեր, Որոտնավանք, Շամբի ջրամբարը, Տոլորսի ջրամբարը եւ այլն: Տարեկան մոտ 100 հազար զբոսաշրջիկ է այցելում Գորիս եւ նրանց թիվը կարող է կրկնապատկվել, եթե ստեղծվեն սպասարկման որակյալ ծառայություններ՝ հանգստի ու ժամանցի վայրեր, մշակութային

հիմնարկներ, բարեկարգվի քաղաքի ընդհանուր տեսքը: Տարածաշրջանը հարուստ է նաև արգելոցներով, արգելավայրերով՝ Մեւ լճի տարածք, որը գտնվում է Գորիս քաղաքից 12 կմ հյուսիս: ՀՀ կառավարության 10 հունիսի 2011 թվականի N 973-Ն որոշումով Գորիս քաղաքը հայտարարվել է զբոսաշրջային կենտրոն: Հաշվի առնելով Գորիսում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների բնույթը, գեղարվեստական արժեքը, առանձին հուշարձանների և հուշարձանախմբերի՝ ժամանակակից կյանքի գործնական պահանջների համար օգտագործելու հնարավորությունները, քաղաքում զբաղեցրած դիրքը, ինչպես նաև, ելնելով նրանց ապագա օգտագործման, շրջապատող տարածքների գործառական ճիշտ կազմակերպման տեսանկյունից՝ հնարավոր է Գորիսի պատմական կենտրոնում ստեղծել քաղաքի էությանը համապատասխան մշակութային գոտի՝ «Հին Գորիս» պատմամշակութային արգելոցը:

Խնդիրներ

- «Հին Գորիս» պատմական կենտրոնի ստեղծում
- բարեկարգել «Հին Գորիս» բնակատեղին՝ քարանձավներն ու տները վերածելով ցուցադրության սրահների եւ հանգստի ու ժամանցի կենտրոնների,
- բարելավել հյուրընկալման ծառայությունների որակը, թաղամասերը, զբոսաշրջային կառույցները և ենթակառույցները,
- խրախուսել մասնավոր հատվածի մասնակցությունը զբոսաշրջության ոլորտում,
- քաղաքում աշխուժացնել մշակութային միջոցառումները,
- զարգացնել ձմեռային տուրիզմը՝ ներդնելով ձմեռային սպորտաձեռքերը,
- պահպանել զբոսաշրջային գրավչությունները, վերականգնել հյուրասիրության ավանդույթները,
- հրատարակել տեղեկատվական բուկլետներ:
- քաղաքի համար մշակել բրենդ

4.15 Աշխատանք եւ սոցիալական ծառայություն

Քաղաքապետարանը չունի համայնքի բնակչության աշխատանքի եւ սոցիալական ապահովության հիմնախնդիրներին լուծում տվող մասնագիտացված առանձին ստորաբաժանում: Մակայն քաղաքապետարանի աշխատակազմը համայնքի բնակչության սոցիալական ապահովության որոշ հարցեր իրականացնում է՝ պարտադիր լիազորությունների սահմաններում: Գորիս համայնքում գործում է բարեգործական ճաշարան՝ համայնքում բնակվող սոցիալապես անապահով տարեցների, փախստականների եւ անապահով հաշմանդամների համար: 1992թ.-ից «Համագործակցություն Հայաստան» ֆրանս-հայկական կազմակերպության հովանավորությամբ գործում է բարեգործական ճաշարանը: 1996թ.-ից համայնքում գործում է նաև ատամնաբուժական դարմանատուն, այն «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հ/կ-ի միջոցով անվճար ատամնաբուժական եւ ակնաբուժական ծառայություններ է մատուցում մինչև 14 տարեկան երեխաներին: Ծրագիրը շարունակական է յուրաքանչյուր տարվա համար հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը: Միջազգային կազմակերպությունների հետ համատեղ 2005թ.-ից իրականացվում են սոցիալապես անապահով ընտանիքներին կացարաններով ապահովելու ծրագրեր: Որոնց արդյունքում UNCHR կազմակերպության աջակցությամբ 40 փախստական ընտանիքներ ապահովվել են բնակարաններով: Շվեդարիայի զարգացման և համագործակցության գործակալության հետ համատեղ 2005թ.-ից սկիզբ դրվեց համայնքում «Սոցիալական տուն աջակից պայմանների առկայությամբ» ծրագիրը, որի արդյունքում համայնքի անապահով 14 ընտանիքների 2009թ.-ին և

20 ընտանիքների 2012թ-ին համար կառուցվեցին բնակարաններ, որոնք հանդիսանում են համայնքի սեփականություն և տրամադրվել են երկարաժամկետ բնակվելու պայմանով:

Խնդիրներ

- Բնակարանի կարիքավոր ընտանիքներին բնակարանով ապահովում
- Սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցության ապահովում

4.16 Տարածքային զարգացում, քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

Ըստ Գորիս քաղաքի Գլխավոր հատակագծի՝ քաղաքը մարզի մշակութային, ուսումնական, զբոսաշրջային կենտրոնն է և տարածաշրջանի վարչական-տնտեսական և առևտրային կենտրոնի գործառույթներ է իրականացնում: Ըստ «Գորիս Քաղաքի Գլխավոր Հատակագծի»՝ Գորիս քաղաքում հետագա 10 տարիների համար, նախատեսել տարանցիկ երթևեկության հետևյալ միջոցառումները.

- հյուսիս-հարավ ուղղությամբ տարանցիկ փոխադրումները քաղաքից մասնակիորեն հանելու համար օգտագործել օդանավակայան տանող ճանապարհը՝ լրացնելով մինչև U-2 մայրուղի ճանապարհահատվածը
- արեւելք-արեւմուտք ուղղությամբ Գորիս-Ստեփանակերտ ճանապարհահատվածի սկզբնամասը դուրս բերել քաղաքի տարածքից՝ երկու թունելի կառուցմամբ (0.4 եւ 1.5 կմ երկարությամբ):
- համաձայն քաղաքի գլխավոր հատակագծի՝ Վանքի Տափ թաղամասի նոր ճանապարհը կառուցել Վարարակն գետի ձախափնյա մասում միջպետական Արցախյան փողոցը բեռնաթափելու համար,
- Կառուցել և վերանորոգել համայնքի հակահեղեղային սելավատարները, ապահովելով համայնքի քաղաքաշինական ֆոնդի ֆիզիկական պահպանության խնդիրը
- բարեկարգել և ասֆալտապատել մայրերը՝ ապահովելով բնակչության անվտանգ երթևեկը,
- մեծացնել գործող որոշ հեղեղատարների թողունակությունը,
- գործարկել քաղաքի հյուսիս-արելյան մասից սկիզբ առնող նոր հեղեղատար.

4.17 Քաղաքացիների և տնտեսվարող սյուբեկտների իրավունքների պաշտպանություն

Գորիսի քաղաքապետարանը համայնքի քաղաքացիների և տնտեսվարող սուբեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացնում է պարտադիր լիազորություններ, որոնց շարքում հատկանշելի են.

- սեփական իրավասության շրջանակում միջոցների ձեռնարկում՝ ուղղված համայնքի բնակիչների և տնտեսվարող սուբեկտների իրավունքների և օրինական շահերի պաշտպանմանը
- համայնքի բնակիչների հաշվառման կազմակերպում
- համայնքի բնակիչների և տնտեսվարող սուբեկտների իրավունքների և օրինական շահերի պաշտպանման նպատակով միջորդագրերի, եզրակացությունների, երաշխավորագրերի ներկայացում դատարանում, կամ այլ անձանց ու կազմակերպություններին

- քաղաքացիների ընդունելության կատարում, քաղաքացիների առաջարկությունները, դիմումների ու բողոքների /օրենքով սահմանված կարգով/ քննության առնում, նրանց լուծմանն ուղղված համապատասխան միջոցների ձեռնարկում
- քաղաքացիների, տնտեսվարող սուբյեկտների առաջարկությունների սահմանված կարգով ներառում համայնքի ավագանու որոշումների նախագծերում եւ նրանց հնարավորության ընձեռնում նրանց՝ մասնակցելու ավագանու նիստերին
- քաղաքապետարանի լիազորությունների շրջանակում կայացրած որոշումներով համայնքի բնակիչների կողմից տնտեսական գործունեության ծրագրերի իրականացման խթանում
- հանրահավաքների, երթերի, ցույցերի եւ զանգվածային միջոցառումների անցկացման կանոնակարգում՝ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված կարգով
- քաղաքացիներին, տնտեսվարող սուբյեկտներին փաստաթղթերի պատճենների եւ կրկնօրինակների տրամադրման կազմակերպում՝ համայնքի արխիվից

4.18 Արտակարգ իրավիճակներ եւ քաղաքացիական պաշտպանություն

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանն զուգահեռ Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, ֆեդերալ, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ(կապի, տրանսպորտի, բժշկական, սանիտարական ծառայությունների եւ այլ ոլորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Քաղպաշտպանության շտաբը, իր մեջ ներառող ծառայություններով, յուրաքանչյուր տարի, պարբերաբար երկու անգամ կազմակերպում է վարժանքներ, որը մասն է կազմում տվյալ ժամանակահատվածում համապետական մաշտաբով կազմակերպվող Սյունիքի մարզը ներկայացնող տարբեր քաղաքային համայնքների Քաղպաշտպանության շտաբերի ընդհանուր արժանքների գործողություններին ու ընթացակարգերին:

Գորիսի տարածաշրջանի Քաղպաշտպանության շտաբի պետը ի պաշտոն համարվում է քաղաքապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են Քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

Քաղաքացիական պաշտպանության համար պահանջվող միջոցառումները (ինժեներական նախապատրաստում՝ հակահեղեղային, հակատողանքային միջոցառումներ), սեյսմիկ վտանգի հաշվառումը, արտաքին եւ ներքին ճանապարհային ցանցի կարգավորումը, ինժեներական ենթակառուցվածքներով ապահովվածությունը եւ դրանց կատարելագործմանն ուղղվածությունները սահմանում է «Գորիս Քաղաքի Գլխավոր Հատակագիծ» փաստաթուղթը: Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան, համապատասխան որի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համար նախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների տարման կոմունիկացիոն սխեմաներ:

Խնդիրներ

- Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների շտաբի կենտրոնատեղի նորոգում և կահավորում, տեխնիկայով համալրում ,

- Թաքստոցների և ապաստարանների կանոնակարգում,
- Համայնքի ռազմական պատրաստակամության կոմունիկացիաների ստեղծում:

4.19 Հակառադիացիոն ապաստարանների անհրաժեշտ ծավալի հաշվարկ (ՀՌԱ) եւ տեղաբաշխում

Ըստ «Գորիս Քաղաքի Գլխավոր Հատակագծի» Գորիս քաղաքում անհրաժեշտ է ստեղծել հակառադիացիոն պաշտպանության հզոր համակարգ, այդ նպատակի համար օգտագործելով բոլոր տիպի շենքերի ու շինությունների նկուղները: Քաղաքի հեռանկարային զարգացման ընթացքում բոլոր կարգի նորակառույցները պարտադիր պետք է նախագծվեն նկուղային հարկերով: Գորիս քաղաքում գոյություն ունի արտակարգ իրավիճակների կառավարման կետ՝ Գորիսի քաղաքապետարանի վարչական շենքին կից:

Բնակչության իրազեկումը նախատեսվում է իրականացնել ռադիոհեռուստակայանների միջոցով, իսկ արտակարգ դեպքերում արտադրական եւ վարչական շենքերում տեղադրվող շչակներով:

4.20 Քաղաքապետարանի գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը

Քաղաքապետարանն ունի իր պաշտոնական կայքը՝ www.goriscity.am, որի նպատակը բնակչությանը քաղաքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, ՏԻՄ օրենքով ամրագրված հրապարակայնության եւ թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը եւ բնակչության շրջանում քաղաքային իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Սակայն կայքում տեղական ինքնակառավարման վերաբերյալ տեղեկատվությունը դեռեւս հեռու է բավարար լինելուց եւ անհրաժեշտ է բարելավել կայքի աշխատանքը, բարձրացնել օպերատիվությունը: Քաղաքում տեղադրված չեն տեղեկատվական ցուցատախտակներ, որով անհրաժեշտ է ապահովել քաղաքապետի եւ քաղաքի ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը: Այդուհանդերձ, բնակչության պատկերացումները քաղաքային իշխանության գործունեության մասին չափազանց ցածր են, որը չի նպաստում քաղաքային իշխանություն-բնակչություն վստահության աճին: Գորիսում գործում են հետեւյալ լրատվամիջոցները՝ հրատարակվում է «Զանգեզուր» (հիմնված 1934թ.), «Կամք+» (հիմնված 2005թ.), «Բան ու Գործ» թերթերը (հիմնված 2003թ.), «Փերի» մանկական ամսագիրը (հիմնված 2002թ.), «Լաստ» հեռուստատեսությունը: Քաղաքում գործունեություն են ծավալում 3 տասնյակից ավել հասարակական կազմակերպություններ, որոնք քաղաքացիական ակտիվություն են ցուցաբերում եւ ծրագրեր են իրականացնում ամենատարբեր ոլորտներում:

Խնդիրներ

- բարելավել քաղաքապետարանի պաշտոնական կայքի գործունեությունը,
- բարելավել բնակչությանը տրվող տեղեկատվության մակարդակն ու որակը,
- քաղաքում գործող լրատվամիջոցներով լուսաբանել տեղական իշխանության գործունեությունը,
- լուսաբանել համայնքի ղեկավարի եւ ավագանու գործունեությունը հեռուստատեսությամբ եւ մամուլով,

- մշակել հ/կ-ների հետ համագործակցության եղանակներ՝ նրանց մտավոր ու նյութական միջոցները նպատակաուղղել քաղաքի զարգացմանը,
- քաղաքում ապահովել անհրաժեշտ քանակի տեղեկատվական ցուցատախտակների առկայությունը, հետևել պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվության թարմացմանը:

5. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ

Համայնքի բյուջեր եկամտային մասը ըստ հոդվածների

	2009	2010	2011	2012
1 Գույքահարկ շենքերի և շինությունների համար	3,900.00	5800.00	5,900.00	6,300.00
2 Գույքահարկ փոխադրամիջոցների համար	22,542.00	16,900.00	17,800.00	19,560.00
3 Հողի հարկ	6,300.00	6,489.40	6,400.00	5,059.50
4 Տեղական տուրքեր	7,165.00	7,475.00	8,175.00	8,175.00
5 Պարտադիր վճարներ	4,640.00	5,000.00	5,300.00	5,300.00
6 Դոտացիաներ պետական բյուջեից	231,895.90	279,970.50	282,598.10	286,316.30
7 Սուբվենցիաներ պետական բյուջեից	40.90	304.90	68,047.00	31,220.00
8 Գույքի վարձակալությունից եկամուտներ	5,100.00	4,800.00	4,800.00	4,800.00
9 Տեղական վճարներ	1,000.00	2,500.00	2,500.00	2,500.00
10 Սուտքեր տույժերից, տուգանքներից	500.00	1,100.00	1,100.00	1,100.00
11 Այլ եկամուտներ	5909.9	4,220.70	1,700.70	2,700.50
12 Պակասորդի ֆինանսատրաման աղբյուր	11082.3	18,516.60	34,224.80	62,815.20
Ընդամենը եկամուտներ	300,076.00	353,077.10	438,545.60	435,846.50

Համայնքի բյուջեր ծախսային մասը ըստ հոդվածների

	2009	2010	2011	2012
1 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	64,133.80	68,526.50	80,843.10	77,419.20
2 Տնտեսական հարաբերություններ	14,890.00	29,966.60	21,000.00	33,700.00
3 Շրջակա միջավայրի պաշտպանություն	23,740.00	30,000.00	28,225.00	57,445.00
4 Կոմունալ ծառայություն	7,000.00	15,844.00	15,054.20	28,760.40
5 Առողջապահություն	0.00	0.00	3,000.00	0.00
6 Հանգիստ, մշակույթ և կրոն	36,605.00	39,850.00	42,550.00	43,650.00
7 Կրթություն	141,207.20	146,510.00	159,460.00	159,560.00
8 Սոցիալական պաշտպանություն	8,500.00	8,700.00	72,000.00	10,820.00
9 Պահուստային ֆոնդեր	4,000.00	13,680.00	16,413.30	24,491.90
Ընդամենը	300,076.00	353,077.10	438,545.60	435,846.50

6. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Ռազմավարությունը

Ապահովել Գորիս համայնքի սոցիալ-տնտեսական աճը, համայնքը դարձնել միջազգային տուրիզմի եւ էկոտուրիզմի զարգացման կենտրոն:

Համայնքի առաքելությունը՝ որակյալ ծառայություններ մատուցել համայնքի բնակչությանը եւ զբոսաշրջիկներին, ապահովել համայնքի բնականոն զարգացումը, Խթանել համայնքի գիտատեխնիկական զարգացմանը

Գործիսը դարձնել բարեկեցիկ եւ ներդրումների համար մրցունակ:

Համայնքի քառամյա զարգացման ծրագրի հիմնական նպատակներն են՝

- Բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման եւ գանձման արդյունավետ քաղաքականություն:
- Ըստ ամենայնի խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ:
- Պահպանել քաղաքի ճարտարապետության արդի ոճը, բացառել ինքնակամ շինարարությունը եւ հողազավթումները:
- Բարելավել կրթական եւ մշակութային ոլորտի գործունեությունը՝ մշտապես հարստացնելով նրանց նյութատեխնիկական բազան:
- Շարունակել քաղաքի բարեկարգման եւ կանաչապատման աշխատանքները
- Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:
- Համայնքային տարբեր շահագրգիռ խմբերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական եւ բարեգործական կազմակերպությունների, անհատների ներգրավմամբ ու նախաձեռնություններով իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Վերլուծություն

Սույն վերլուծությունը ներկայացնում է համայնքում առկա ենթակառուցվածքների, ռեսուրսների, տնտեսական և սոցիալական տարբեր ոլորտների ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու ռիսկերը: Այն նպատակ է հետապնդում վերհանել առկա հիմնական խնդիրներն ու գնահատել համայնքի զարգացման հնարավորություններն ու ուղղությունները:

6.1 Համայնքի ուժեղ կողմերը

- Քաղաքի աշխարհագրական դիրքը, Գործիս քաղաքը ռազմավարական նշանակություն ունի՝ գտնվում է Իրանն ու Արցախը ՀՀ-ին կապող միջպետական մայրուղիների խաչմերուկում,
- բարձրագույն ուսումնական հաստատությունների առկայությունը,
- պատմամշակութային ու բնական հարուստ ժառանգության առկայությունն ու մշակութային հարուստ ավանդույթները,
- քաղաքի գրավիչ ճարտարապետական տեսքը
- եվրոպական քաղաքների հետ համագործակցությունը՝ քույր քաղաքներն են՝ Վիեն (Ֆրանսիա), Նեսվիժ (Բելառուսիա)
- տուրիզմի զարգացման հնարավորությունը
- տարածջրջանային առողջապահական կենտրոնի առկայությունը,
- հասարակական կազմակերպությունների լայն սպեկտրի առկայությունը
- լրատվամիջոցների առկայությունը
- փոքր եւ միջին բիզնեսում բնակչության ներգրավվածությունը:

6.2 Համայնքի թույլ կողմերը

- Գործազրկության բարձր մակարդակը եւ աշխատատեղերի պակասը,
- արտագաղթը, հատկապես երիտասարդների միգրացիան,

- կոմունիկացիոն ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը, մասնավորապես խմելու ջրացանցի մասնակի եւ կոյուղացանցի վատթար վիճակը,
- բնակարանի կարիք ունեցող երտասարդ ընտանիքների մեծ թիվը,
- փողոցների ոչ բարվոք վիճակը,
- բազմաբնակարան շենքերի տանիքների, մուտքերի վատթար վիճակը,
- ՏԻՄ-բնակչություն թույլ կապը,
- հյուրընկալման եւ սպասարկման ծառայությունների ցածր որակը եւ բարձր գները,
- միջպետական M2 ճանապարհների անբարեկարգ վիճակը, բնակավայրի միջով անցնող
- միջպետական Մ12 ճանապարհներին հետիոտնի համար անցումների բացակայությունը,
- քաղաքի անբարեկարգ վիճակը՝ անբավար լուսավորություն, աղբահանում, մայրերի անանցանելիություն, ճանաչողական ցուցանակների բացակայություն,
- ճանապարհային երթեւեկության նշանների մասնակի բացակայություն, երթեւեկության անվերահսկելիություն,
- բիզնես ոլորտի համար ոչ բարենպաստ քաղաքականությունը:

6.3 Համայնքի բարենպաստ փոփոխությունները եւ հնարավորությունները

- Վերջին տարիներին քաղաքային կյանքի վրա բարերար ազդեցություն է ունեցել տուրիստների հոսքը քաղաք ու տարածաշրջան եւ այն զարգանալու միտում ունի,
- գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնման հնարավորությունը,
- ստեղծել հնարավորություններ տեղացի եւ սփյուռքահայ ներդրողների համար փոքր եւ միջին բիզնեսը ընդլայնելու նպատակով,
- զբոսաշրջիկների տարեց-տարի ավելացող հոսք

6.4 Համայնքին վտանգ սպառնացող փոփոխությունները

- Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասներ (երկրաշարժ, հեղեղումներ, սողանքների առաջացում)
- գործազրկության մակարդակի աճ
- բնակֆոնդի վիճակի վատթարացում
- արտագաղթ
- հեղեղների ժամանակ Վարարակն գետի վարարում, որը առափնյա հենապատերի բացակայության պատճառով վտանգում է քաղաքը:

7. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Թ/Ն	ՕձՕՕՅԿՅՅ»ճ	ā ³ ÷ Ç ՍՇ ³ í áñ	2008Ā. ÷ ³ ēī .	2009Ā. Ī ³ YĒ.	2010Ā. Ī ³ YĒ.	2011Ā. Ī ³ YĒ.	2012Ā. Ī ³ YĒ.
1	2	3	4	5	6	7	8
1.	Թ ³ Ս ³ ՍԿՍ/Մ ³ Ī ³ í ³ ՍñÇ í ³ ñ ³ Ī ³ ūĀ	Ñ ³	600	600	600		600
2.	˘Y ³ Ī ³ āāōĀŪ ³ Y ³ ĀÇí Ā	Ñ ³ ½. Ū.	23,2	23.2	23.2	23.2	23.1
3.	˘Y ³ Ī ³ »ÉÇ Ե»Y ³ »ñÇ ĀY ¹ Ñ ³ Yáōñ ĀÇí Ā	Ե»Y ³ Ū	114	116	119	119	120
	ĀY ¹ Ñ ³ Yáōñ Ū ³ Ī ³ »ñ»ēĀ	Ñ ³ ½. ūŪ	139.2	140.8	143.2	143.2	143.8
	μY ³ Ī ³ ñ ³ Y ³ »ñÇ ĀÇí Ā	μY ³ Ī ³ ñ.	2179	2219	2271	2271	2291
4.	ì Ā ³ ñ ³ ՍՇY ³ Ե»Y ³ »ñÇ ĀÇí Ā, ³ Ū ¹ Āí āōŪ ³	Ե»Y ³ Ū	13	13	13	13	13

6.	2í í áí Ý³ ÍÝ»ñÇ ĀĆí Ā	Ñ³ í	834	842	851	863	874
7.	Đ³ Ú³ í ÇñáoĀĀáoÝÝ»ñÇ ĀĆí Ā	Ñ³ í	1	1	1	1	1
8.	ĒÇ³ ½áñ³ · ñ³ ĬÇÝ Ĭ³ é³ í³ ñŪ³ Ý³ Ýó³ Ĭ μÝ³ Ĭ»ĒÇ Β»Ýù»ñÇ ĀĆí Ā	Β»Ýù	-	-	-	-	-
9.	î »Ō³ ÷ áĒí áŌ³ ŌμÇ ú³ Ý³ Ĭ Ā	í áÝÝ³	1620	1680	1790	1860	2350
	³ Ĭ¹ Āí áŌŪ³ μÝ³ Ĭ ááoĀĀáoÝÇŌ		910	940	960	1010	1130
10.	é³ ÝÇí³ ñ³ Ĭ³ Ý Ū³ ùñŪ³ Ý³ ³ Ōμ³ Ñ³ ÝáoĀĬ³ Ý Ū»ù»Ý³ Ĭ³ Ĭ³ Ý á³ ñĬÇ Ū»ù»Ý³ · Ū»Ē³ ÝÇ½ŪÝ»ñÇ ú³ Ý³ Ĭ Ā	ŪÇ³ í áñ	8	8	7	5	5
11.	é³ ÝÇí³ ñ³ Ĭ³ Ý Ū³ ùñŪ³ Ý³ í³ ñ³ Ĭ ú Ā	Ñ³	86	86	86	86	86
12.	Ō»ù»Ý³ Ĭ³ Ĭ³ Ý á³ ñĬÇ í »ĒÝÇĬ³ Ĭ³ Ý á³ í ñ³ Ēí³ Ĭ³ ÝáoĀĬ³ Ý Ū · í³ Ĭ³ ñ · áñĬ áŌáoĀĬ³ Ý · áñĬ³ ĬÇŌ Ā	· áñ- Ĭ³ ĬÇŌ	0,87	0,87	0,84	0,85	0,85
13.	àéá · Ū³ Ý ó³ ÝŌÇ »ñĬ³ ñáoĀĀáoÝ Ā	ĬŪ	98				
22.	Ū³ Ē³ ¹ áñáo³ Ĭ³ Ý ÑÇŪÝ³ ñĬ Ý»ñÇ ĀĆí Ā	Ñ³ í	7	7	7	7	7
	½μ³ Ō»Ōñ³ Ĭ ÑáoŌ³ í³ ñ³ Ĭ ú Ā	Ñ³ ½ · ŪŪ	27,4	27,4	27,4	27,4	27,4
	Β»Ýù»ñÇ í³ ñ³ Ĭ ú Ā	ùŪ	13486	13486	13486	13486	13486
	»ñ»Ē³ Ý»ñÇ ĀĆí Ā	Ū³ ñ¹	670	700	724	805	865
	ĒŪμ»ñÇ ĀĆí Ā	ĒáoŪμ	30	30	30	30	30
23.	Đ³ Ýñ³ Ĭ ÑĀ³ Ĭ³ Ý ¹ áñáoÝ»ñÇ ĀĆí Ā	Ñ³ í	7	7	7	7	7
	³ Β³ Ĭ »ñí Ý»ñÇ ĀĆí Ā	Ū³ ñ¹	2941	2715	2610	2550	2575
24.	Ōñ³ ĀΒ³ Ĭ³ Ý ¹ áñáoÝ»ñÇ ĀĆí Ā	Ñ³ í	2	2	2	2	2
	éáí áñáoŪ»ñÇ ĀĆí Ā	Ū³ ñ¹	261	224	200	212	210
	μ³ ĀÇÝÝ»ñÇ ĀĆí Ā	μ³ ĀÇÝ	4	4	4	4	4
	ĒŪμ»ñÇ ĀĆí Ā	ĒáoŪμ	-	-	-	-	-
25.	Ō³ ñ½³ ¹ áñáoÝ»ñÇ ĀĆí Ā	Ñ³ í	1	1	1	1	1
	»ñ»Ē³ Ý»ñÇ ĀĆí Ā	Ū³ ñ¹	189	194	209	209	209
	Ū³ ñ½³ Ō³ »ñÇ ĀĆí Ā	Ñ³ í	6	5	6	6	6
	ĒŪμ»ñÇ ĀĆí Ā	ĒáoŪμ	14	14	15	15	15
26.	2ñí³ ¹ áñáo³ Ĭ³ Ý ÑÇŪÝ³ ñĬ Ý»ñÇ ĀĆí Ā	Ñ³ í	5	5	5	5	5
	»ñ»Ē³ Ý»ñÇ ĀĆí Ā	Ū³ ñ¹	542	535	530	545	550
	ĒŪμ»ñÇ ĀĆí Ā	ĒáoŪμ	22	20	20	20	20
27.	ŌΒ³ Ĭ áŌĀ³ ĬÇÝ ÑÇŪÝ³ ñĬ Ý»ñÇ ĀĆí Ā	Ñ³ í	1	1	1	1	1
	»ñ»Ē³ Ý»ñÇ ĀĆí Ā	Ū³ ñ¹	75	75	65	65	70
	ĒŪμ»ñÇ ĀĆí Ā	ĒáoŪμ	2	2	1	1	1
28.	ĐÇí³ ÝĬ³ ÝáoÝ»ñÇ ĀĆí Ā	Ñ³ í	1	1	1	1	1
	Ū³ Ñ×³ Ĭ³ ĒÝ»ñÇ ĀĆí Ā	Ñ³ í	210	150	110	110	110
29.	äáĒÇĬĒÇÝÇĬ³ ·³ ŪáoĒ³ í áñÇ³ Ý»ñÇ ĀĆí Ā	Ñ³ í	3	3	3	3	3
	³ ŌŌ»ĒáoÝ»ñÇ ĀĆí Ā	Ū³ ñ¹/i ³ ñÇ	111000	109000	110000	112000	112300
30.	2Ý³ á³ Ñáí ĀÝí³ ÝÇúÝ»ñÇ ĀĆí Ā	ĀÝí ·	3542	1115	960	830	976
31.	Ĭ »ÝĒ³ ĀáΒ³ Ĭ³ éáoÝ»ñÇ ĀĆí Ā	Ū³ ñ¹	3833	3397	3570	3741	3945
32.	Đ³ ΒŪ³ ÝĬ³ ŪÝ»ñÇ ĀĆí Ā	Ū³ ñ¹	1433	1506	1586	1677	1767
33.	ä³ í »ñ³ ½ŪÇ ·³ ΒĒ · í »ñ³ ÝÝ»ñÇ ĀĆí Ā	Ū³ ñ¹	204	182	170	167	162
34.	¶áñĬ³ ½áoñĬ Ý»ñÇ ĀĆí Ā	Ū³ ñ¹	2787	2135	1840	1620	1666
35.	Ō³ ĒĒí³ Ĭ³ ÝÝ»ñÇ ĀĆí Ā	Ū³ ñ¹	57	57	57	18	18
36.	ĀÝí³ Ý»Ĭ³ Ý Ýá³ Ēí³ Ēí³ óáoŌ ĀÝí³ ÝÇúÝ»ñÇ ĀĆí Ā	ĀÝí ·	1966	802	758	615	736